

ԱՅԼ ԵՒՍ ԵՐԱՁ, ՅԵՌԵՐ ԶԷ, ԱՅԼ ԿՐՏԱՐԱՐԱՆԻ ԻՐԱՂՈՒԹԻՒՆ

Երկար տանջանքից, հաղարաւոր ընտրելագոյն զահերից և նրանց մաքուր արեան հեղեղներից յետոյ, միլիոնաւոր ընդունակ մարդկանց խաւարի մէջ երկար պահելուց, լուսատու և լուսաւոր գլուխներն աքսորավայրերում փտեցնելուց յետոյ, բոլոր զէնքերի, բոլոր միջոցների և խստութիւնների ապարդիւն հանդիսանալուց յետոյ վերջապէս հասան հոկտեմբերեան ահարկու օրերը, երբ դադարեց ամբողջ Ռուսաստանի սովորական կեանքն ու կենցաղը և աշխատաւոր, ուսանող և ազատութեան սիրահար մասը թողեց իւր բան ու գործը, թափուեց փողոցներ և վճռեց կամ խլել բիւրօկրատիայից վաղուց փափագածը և կամ մեռնել:

Հոկտեմբերին մեռաւ ռուս ժողովրդի ընտրելագոյն զաւակը՝ Մոսկովայի անդրանիկ համալսարանի առաջին ընտրուած վերատեսուչը, ժողովրդի և ուսանողութեան ազատութեան համար ճառելիս լուսաւորութեան նախարարի մօտ նիստի ժամանակ՝ նրա մահը ցնցող տպաւորութիւն թողեց ամբողջ Ռուսաստանի լաւագոյն մասի վրայ առանց ազգի և կրօնի խտրութեան. ամենքը զգացին, որ անժամանակ գերեզման մտաւ ազատութեան ամենաուժեղ ռահվիրաներից մինը և շտապեցին զանազան ձևերով արտայայտել իրենց սրտի կսկիծը: Ծանր էր կորուստը, անորոշ ապագան: Բիւրօկրատեան վերջին ճիգն էր թափում զանազան «մեկնութիւններ և յաւելուածներ խմբագրելու տրուած աննշան ազատութիւնը նորից ձեւականութեամբ խեղդելու և ուրեաղնիկի, համայնական նաչալնիկի և ոստիկանի իշխանութիւնը պահպանելու համար և երևի ուրախ էր, որ մի թշնամուց, ուժեղ մարտընդդից ազատուեց. բայց նրա այդ հաշիւները սխալ դուրս եկան և ինչ որ չը կարողացաւ անել կենդանի Ս.

Ն. Տրուբեցկոյն, կատարեց նահատակ դիակըն, նրա ծաղկազարդ դագաղը:

Պետերբուրգում երբ կարգը կատարելուց յետոյ Ելենեան հիւանդանոցի եկեղեցուց հանգուցեալի դագաղը նիկողայոսեան երկաթուղիով պէտք է Մոսկվա ուղարկէին, հաւաքուեց 120,000 բազմութիւն, որը դագաղի հետ գնալիս և սուրբ Աստուած երգելիս՝ հնչեցրեց այդքաջ նահատակին վայել ազատութեան երգը և կայարարանից դարձաւ մայրաքաղաքի գլխաւոր փողոցով նոյն կարգով և ցոյցերով: Այդ օրուանից սկսուեց շարժումը Պետերբուրգում ամենաահեղ կերպով: Հանգուցեալին հասցրին Մոսկվա և Ռուսաստանի այդ զգայուն դարձած սիրտը իւր արժանաւոր զաւակի և քաղաքացու աճիւնին այնպիսի յարգանք և ընդունելութիւն ցոյց տուաւ, որպիսին դարերի ընթացքում տեսնուած չէր այնտեղ:

Հողին յանձնեցին Ս. Ն. Տրուբեցկոյն, ժողովուրդը ազատական երգերով վերադառնում էր գերեզմանատանից, երբ ոստիկանութիւնը թակարդ սարքեց նրա համար Մոսկվա գետի կամուրջի մօտ և խաղաղ ժողովուրդի վրայ սկսեց գործադրել սիրած մտրակներն ու սուլինները: Հաշիւը սխալ էր, այդտեղ այլ ևս խմբակի և նրա զգացման հետ գործ չուէր նա, ոչ. այդտեղ վերադառնում էլ Ռուսաստանի տանջանած 130 միլիօն ժողովուրդի վիշտը իւր երկար ժամանակ խեղդուած ձայնով և վրդովուած խղճով և նրա դէմ՝ սուինն ու մտրակը այլ ևս յաղթանակել չէին կարող: Լսուեց ժողովուրդի զայրոյթը և հետեւեց դեռ չը տեսնուած գործադուլը: Շուտով Մոսկվային ու Պետերբուրգին արձագանք տուաւ ամիողջ Ռուսաստանի ժողովուրդի լաւագոյն մասը իւր աշխատաւոր մեղու զաւակներով և կանգնեցրեց ամբողջ կեանքը: Ռուսաստանի բոլոր օրդոց համերաշխութիւնն ու պահանջը այնքան միաբան էր և զօրաւոր, որ նախարարապետ Վիտտէն իւր զեկուցման մէջ անհրաժեշտ դատեց մատնանիշ լինել նորին Կայսերական Մեծութեան այն միջոցների վրայ, որոնք անհրաժեշտ էին երկիրը խաղաղացնելու համար և

այդ միջոցները ոչ թէ ուժեղացրած պաշտպանութիւն, զինուորական դրութիւնն և օրէնքի վերացումն էլ, այլ ընդհանուր ձայնատուութեան իրաւունք, խօսքի, խղճի, ժողովների անձի ազատութիւն և առանց Պետական Դու-
մայի համաձայնութեան օրէնքներ հրատարակելու անհնա-
րինութիւն: Իրաւունքներ, որոնք գերմանական սահմա-
նադրութիւնից աւելի են և ոչ պակաս: Այսպիսով մեզ
համար էլ հասաւ վաղուց փափագելի սրբազան օրը և
գաղարեցիկը ոստիկանական բարձր հայեցողութեան խա-
ղալիք լինելուց, գաղարեցիկը անլեզու, բռնաբարուած
խղճով, անջատ, վայրենիների նման ապրելուց և մի միայն
դրամով քաղաքացի ու չափահաս կոչուելու դժբաղդու-
թիւնից: Այլ ևս ցնորք չէ մեր քաղաքացիական ազատու-
թիւնն ու հասունութիւնը: Նա հոկտեմբերի 17-ին շնոր-
հած Բարձրագոյն հրովարտակից յետոյ կատարուած իրո-
ղութիւնը և ժողովրդական ներկայացուցիչներին կը մնայ
միայն կատարելագործել երկրի վարչութեան և կառավա-
րութեան գործը համապատասխան օրէնսդրութեամբ: Չիք
խտիր ոչ հրէի և ոչ հեթանոսի, մենք հաւասարազօր
ազատ քաղաքացիներ ենք այսուհետեւ մի երկրի և հայ-
րենիքի և վերջապէս չափահաս ճանաչուած: Գրկենք իրար
և դուրս դանք ձեռք ձեռքի տուած աշխատանքով բու-
ժելու մեր և մեր երկրի վէրքերը:

Դուք թուրք և հայ եղբայրների, դուք, որ դարեր
շարունակ դրացի և լաւ աշխատակիցներ էիք, դուք որ
սե ոյժերի գործիք և նեղ ազգայնութեան զգացմունքի
խաղալիք դարձած ուրիշների ազատագրական աշխատանքի
ժամանակ իրար արիւնով ոռոգեցիք ձեր գեղեցիկ և բա-
րելից երկիրը, վայր դրէք ձեր արիւնոտ զէնքերը, մոռա-
ցէք սե օրերի սե դէպքերը, մի թունաւորէք այսուհետեւ
մեզ համար բացուող գեղեցիկ օրուայ աւետարեւր արշա-
ւոյսը և աշխատեցէք մաքուր քրտինքով և ցաւակցութեան
արցունքով մաքրել այն հողն ու հացը, որը ձեզ ծնաւ և
կերակրեց: Այսուհետեւ բաց է ձեր առաջ խաղաղ աշխա-
տանքի ասպարէզը. ցոյց տուէք, որ գիտէք գնահատել

ձեզ շնորհուած ազատութիւնը և ընդունակէք այն արդիւնաւորելու: Հոկտեմբերի 18-ին երբ ուրախական ցոյցերով դղրդում էր Կովկասի մայրաքաղաք Թիֆլիզը արձագանք տալով ամբողջ Ռուսաստանին, երբ գեղեցիկ ճառերով բնորոշում էին իրենց գործն ու արդիւնքը, բոլորը եղբայր էին, ջամենքը հաւասար և մի և նոյն զգացմունքով յգեորուած: Միացէք և դուք այդ գեղեցիկ հանդեսին և դուրս եկէք այն կաշմարից, որի մէջ խարխաւում էիք՝ կորցնելով ձեզ հաշիւ տալու ընդունակութիւնը: Ազատենք մենք, չափահաս ենք մենք, լեզու ունենք, ազատ խիղճ և եղբայր ենք: Եւ այս բոլորը այլ ևս ցնորք չէ, այլ կատարուած իրողութիւն: Ուրեմն կեցցէ այսուհետեւ մեր ազատութիւնը, կեցցէ ընդհանուր եղբայրութեան գաղափարը և կեցցէ խաղաղ և բեղմնաւոր գործունէութիւնը հասարակական բարեկեցութեան և երջանկութեան համար:

Ե. Յ. Վ. Մ.